



## Ե Ր Ի Ց ՈՒ Կ /Matricária/



Երիցուկի լատիներեն անվանումը Matricária, բարդաձաղկավորների ընտանիքին պատկանող բույս է, որի բարձրությունը հասնում է մինչև 30սմ: Ունի առանցքային արմատն, բարակ, ճյուղավորված: Ցողունը ուղղաձիգ է կամ վեր սլացող, բարակ, ճյուղավոր: Տերևները դասավորված են հերթադիր, նստած, երկակի կամ եռակի փետրավոր, կտրտված բարակ, նեղ հատվածներով: Ծաղկային զամբյուղիկները խոշոր չեն, նստած են ցողունի գագաթներին և երկար ծաղկակիրների ճյուղերին: Ծաղկազամբյուղի եզրային ծաղիկները վարսանդավոր են (իզական), լեզվակավոր, սպիտակ գույնի: Ծաղկազամբյուղի ներքին ծաղիկները ոսկեդեղնավուն են, երկսեռ, ձագարա-խողովակաձև: Ծաղկակիրը երկարակոնաձև է, ներսում դատարկ, մերկ, ծաղկման վերջում երկարում է: Երիցուկի պտուղը կորացած, հիմքում սեղմված, երկողանի, գորշ կանաչավուն գույնի սերմիկ է: Բույսի բոլոր օրգաններն ունեն ուժեղ

բուրումնավետ հոտ: Պտուղները սկսում են հասունանալ հուլիս ամսին: Բազմանում է սերմերով:

### Քիմիական կազմը

Բույսն իր մեջ պարունակում է սալիցիլաթթու, ասկորբինաթթու, դառնահամ նյութեր, ֆիտոստերին, խոլին, դաբաղանյութեր, եթերայուղ (մինչև 0,85%), որի կազմում կան մոտ 40 տարբեր տարրեր, այդ թվում խամագուլեն, բիսաբոլոլ և նրա օքսիդները, էն-ին-բիցիկլո եթերներ և այլն: Ինչպես նաև՝ ստեարինային թթուների գլիցերիդներ, ֆլավոնային գլիկոզիդ, ումբելիֆերոն, դիօքսիկումարին, շաքար, մոմ, յուղեր՝ լինոլեային, պալմիտինային, օլեինային:


Ծաղկաբույլերը պարունակում են մոխիր՝ 10,57%, մակրոէլեմենտներ (մգ/գ)



Հայտնաբերված չեն հետևյալ տարրերը



Խտացված ձևով արտահայտված են



## Բժշկությունում

### Ներքին օգտագործում

Ունի բազմաթիվ բուժիչ հատկություններ: Ծաղիկներից պատրաստված թուրմը օգտագործվում է ստամոքս-աղիքային տրակտի հիվանդությունների, լյարդի և



լեղուղիների հիվանդությունների, փքանքի (մեթեորիզմ), ստամոքսի կծկումների (սպազմ) ժամանակ: Հոգնաների ձևով - կոլիտների և թուրքի ժամանակ: Ողողումների ձևով - լնդերի, բերանի խոռոչի լորձաթաղանթի բորբոքումների ժամանակ, անգինաների դեպքում:

**Թրջոցների ձևով** - էկզեմայի, խոցերի, թարախաբշտերի, ռենտգենյան ճառագայթներից այրվածքների ժամանակ:

**Տաք թրջոցների ձևով** - ռևմատիզմի, պոդագրայի, արթրիտների, վնասվածքների ժամանակ:

**Փռշու ձևով** - ժողովրդական բժշկության մեջ. միզրենի դեպքում:

**Կոսմետիկ միջոց** - մտնում է բազմաթիվ կոսմետիկ նյութերի և պատրաստուկների կազմի մեջ:

## Դեղատնային երիցուկ

Բարդաձաղկավորների (Compositae) ընտանիքին պատկանող բուրբուռնավետ, միամյա բույս է: Դեղատնային երիցուկ (լատ. Matricaria chamomilla), Երիցուկի ամենատարածված տեսակն է: Հայկական



տարանուններն են՝ օշոշ, հավաձաղիկ, արգանդախոտ, խնձաղեղ, կոկոռճիկ, կուծուռի, լալապղիկ: Բույսն ունի մի քանի տեսակներ և նմանակներ: Երիցուկի բոլոր տեսակների ծաղկակալն արտահայտված կոնաձև է, սնամեջ: Երիցուկ դեղատնայինի լեզվակավոր տերևները հաճախ թեքված են ցողունի ուղղությամբ: Հայտնի է Pyrethrum roseum տեսակը, որի հայրենիքը Հայաստանն է: Բույսի բարձրությունը հասնում է մինչև 70սմ-ի, տերևները մանր են,

փետրաձև, կտրտված, իսկ ծաղկափթթությունները խոշոր են՝ մինչև 7-8սմ տրամագծով, հասարակ են, կիսալիաթերթ կամ լիաթերթ, սպիտակ, վարդագույն, մուգ կարմիր: Լուսասեր է, ձմեռադիմացկուն: Առաջին տարում առաջացնում է տերևային վարդակ, երկրորդ տարվա հունիս-հուլիս ամիսներից սկսում է ծաղկել:

## Բժշկության բնագավառում օգտագործվող երիցուկ

Դեղատնային երիցուկը լայնորեն օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ: Բույսի պատրաստուկներն ունեն հանգստացնող, հականեխիչ, հակաբորբոքային, վարակազերծ հատկություն:

Բույսի եթերային յուղը լավացնում է շնչառությունը, լայնացնում գլխուղեղի անոթները:

Բույսի պատրաստուկներն օգտագործվում են բազմաթիվ հիվանդությունների դեպքում, ընդգրկվում են դեղաբուսային փնջերի մեջ: Սուր և քրոնիկ ստամոքսաբորբի, ստամոքսի խոցի, կոլիտի դեպքում կիրառվում է երիցուկի, վաղենակի, հազարատերևուկի խառնուրդը:



Դեղատնային երիցուկի պատրաստուկները ցուցաբերում են հակակծկանքային (սպազմոլիտիկ), հակաբորբոքային, հականեխիչ (անտիսեպտիկ), հանգստացուցիչ (սեդատիվ) և որոշ չափով ցավազրկող ազդեցություն:

Երիցուկի թուրմն ընդունելու դեպքում բարձրանում է մարսողական գեղձերի հյութազատությունը (սեկրեցիան), ցուցաբերում է լեղամուղ ազդեցություն, քչացնում է խմորման գործընթացները, վերացնում աղիների կծկումները: Բույսի հակակծկանքային ազդեցության մեխանիզմը բացատրվում է նրա գլիկոզիդների Մ-խոլինոլիտիկ հատկություններով:



Երիցուկի եթերային յուղը որոշ չափով ուժեղացնում և խորացնում է շնչառությունը, հաճախացնում սրտի կծկումների ռիթմը, լայնացնում գլխուղեղի անոթները, ունի նաև ախտազերծող և հակաբորբոքային հատկություններ՝ ի շնորհիվ իր կազմի մեջ մտնող խամագուլենի:

Երիցուկի պատրաստուկներն արագացնում են խոցերի էպիթելի վերականգնողական գործընթացները և դադարեցնում են բորբոքման զարգացումը:

Դեմքի մաշկի բնականոն գործունեության պաշտպանման համար 40գ երիցուկը եփել 500մլ ջրով 10ր, սառեցնել, և քամել, լվացվելուց հետո եփուկի մեջ թրջած բամբակյան խծուծով մաքրել դեմքը և վիզը:

## Արտադրության մեջ

Դեղատնային երիցուկը կիրառվում է օժանելիքի արտադրության մեջ: Մշակվում է Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրներում, նաև Բելգիայում և Իսպանիայում: Բույսի տարբեր տեսակներից ստանում են եթերային յուղեր: Լավագույնը *Matricaria recutita* տեսակի կապույտ գույնի լեզվակավոր ծաղկաթերթեր ունեցող երիցուկն է: Այս ծաղիկների գույնը բնորոշվում է համագուլիների բարձր պարունակությամբ:



Չորանալու ընթացքում ծաղիկների կապույտ գույնը դառնում է կանաչ, իսկ հետո՝ գորշագույն: Հավաքված հումքը չորացնում են բաց օդում, մինչև 5սմ հաստությամբ շերտերով: Չորացման ընթացքում խորհուրդ չի տրվում զամբյուղիկները շրջել, որպեսզի ծաղիկները չթափվեն: Լավ եղանակին հումքը չորանում է 5-7օրվա ընթացքում:

Կարելի է չորացնել նաև վերնահարկերում, տանիքների, ծածկերի տակ, ինչպես նաև չորանոցներում՝ 400°C-ից ոչ բարձր ջերմաստիճանում: Հումքի պիտանելիության ժամկետը մեկ տարի է: Հումքի հոտն ուժեղ է, բուրումնավետ, համը՝ դառնավուն, համեմունքային: Որպեսզի կատարվի դեղատնային երիցուկի ինքնավերարտադրություն, հումքի հավաքման ժամանակ, յուրաքանչյուր հատվածում, պետք է թողնել մոտ 20% լավ զարգացած բույսեր:

## Կիրառումը բժշկությունում

### Ծաղիկները

**Թուրմ** (ներքին). ստամոքս-աղիքային տրակտի հիվանդությունների, լյարդի և լեղուղիների հիվանդությունների, փքանքի (մեթեորիզմ), ստամոքսի կծկումների ժամանակ:

### Հոգնաների ձևով

Կուլիտների և թուլքի ժամանակ:

### Ողողումների ձևով

Լնդերի, բերանի խոռոչի լորձաթաղանթի բորբոքումների ժամանակ, անգինաների դեպքում:



### Թրջոցների ձևով

Էկզեմայի, խոցերի, թարախաբշտերի, ռենտգենյան ճառագայթներից այրվածքների ժամանակ:

## Տաք թրջոցների ձևով

Ռևմատիզմի, պոդագրայի, արթրիտների, վնասվածքների ժամանակ:

## Փռչին

### Միգրենի դեպքում

#### Հյութը (ներքին)

Գաստրիտների, ստամոքսի խոցային հիվանդությունների, ստամոքսի և աղիների կծկումների և ցավերի, փքանքի, փորլուծերի, լյարդի, լեղապարկի և միզապարկի հիվանդությունների, երիկամային ցավերի (կոլիկ) ժամանակ: Խորհուրդ է տրվում հյութն օգտագործել ստամոքսահյութի բարձր թթվայնության դեպքում: Գիշերը մեղրի և կաթնասերի հետ հյութի օգտագործումը նպաստում է խորը քնին:

### Արտաքին ողողումների ձևով

Անգինայի դեպքում, աչքերի լվացման համար, վերքերի, վերջույթների քրտնելու ժամանակ:

Դեղատնային երիցուկը մտնում է հանգստացուցիչ, փքահալած (փքանքը թուլացնող) և փափկեցնող հավաքածուների կազմի մեջ:

## Դեղաձևերը, օգտագործման մեթոդները և չափաբաժինները

Երիցուկի ծաղիկների եփուկը (Decoctum florum Chamomillae). 10գ (4ճ/գ) հումքը տեղավորել էմալապատ տարայի մեջ, ավելացնել 200մլ եռացրած ջուր, ծածկել



կափարիչով և տեղավորել եռացող ջրային բաղնիքում՝ 30ր, ապա հովացնել սենյակային ջերմաստիճանի պայմաններում՝ 10ր: Քամել: Ստացված եփուկի ծավալը դարձնել 200մլ՝ ավելացնել եռացրած ջուր: Ստացված եփուկը պահպանել սառը տեղում՝ 2 օրից ոչ ավել: Օգտագործել 1/3-1/2 բաժակ, օրը 2-3 անգամ, ուտելուց հետո, որպես հակակծկանքային, հակաբորբոքային, հականեխիչ, քրտնեցնող, աղիների

կծկանքների,

փքանքի,

լուծերի

ժամանակ:

## Արտաքին՝ ողողումների, թրջոցների, հոգնանների ձևով:

Ռոմազուլոն (Romasulon). հեղուկ է, որի բաղադրության մեջ մտնում է երիցուկի մզվածքը (96մլ) և եթերային յուղը (6% ազուլեն)՝ 0,3մլ: Որպես էմուլգատոր ավելացնում են թվին՝ 80-4գ: Պատրաստուկն ունի հակաբորբոքային և դեզոդորացնող հատկություն: Օգտագործում են ողողումների, լվացումների ձևով՝ բերանի խոռոչի բորբոքային հիվանդությունների (գինգիվիտ, ստոմատիտ), արտաքին ականջի, վագինիտների, ուրետրիտների, ցիստիտների, տրոֆիկ խոցերի, մաշկային հիվանդությունների ժամանակ: Այս պատրաստուկն օգտագործում են գաստրիտների, կոլիտների ժամանակ, փքանքների դեպքում:

Կծկանքային կոլիտների դեպքում օգտագործում են հոգնաների ձևով:

Արտաքին օգտագործման և հոգնաների ժամանակ 1,5ճ/գ պատրաստուկին ավելացնել 1լ ջուր: Օգտագործել 1/2թ/գ պատրաստուկից՝ ավելացրած 1 բաժակ տաք ջուր:

### **Հակացուցում և հնարավոր կողմնակի ազդեցությունները**

Երիցուկի եթերային յուղի բարձր չափաբաժինները կարող են առաջացնել գլխացավ և ընդհանուր թուլություն:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):